Նախագիծ

Բնության հուշարձանի անձնագիր

1. ***Հերթական համարը*** *1*
2. ***Հուշարձանի անվանումը*** *– «Թռչկանի» ջրվեժ*
3. ***Տիպը*** *- Ջրագրական*
4. ***Ենթատիպը*** *- Ջրվեժներ*
5. ***Տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները*** *- Լոռու մարզ, Մեծ Պառնի համայնք, Չիչխան գետի վրա:_X-44⁰ 7' 2"; Y-40⁰ 54' 57"*
6. ***Նկարագրությունը, չափագրությունը և վիճակը*** *- Բարձրությունը ծովի մակարդակից 1786 մետր: Ջրի շիթի բարձրությունը 20-22 մետր, թափվող ջրերի լայնությունը 3-4 մետր, նվազագույն հոսքը 057խոր.մ/վրկ/դեկտեմբեր/,առավելագույնը 2,57խոր.մ/վրկ, միջինը 1,0 խոր.մ/վրկ:: Ջրերի թափման տեղանքը ծածկված է խոշոր ժայռաբեկորներով: Ջրվեժի տարածքը կազմված է միջին էոցենյան դարաշրջանի ավազաքարերից, կրաքարերից և տուֆոկոնգլոմերատներից: Թռչկանի ջրվեժի շրջակա տարածքներում հանդիպում են սահմանափակ տարածքներով ծառախմբեր:*
7. ***Սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը*** *- Պահպանական գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 1.0 հա,* ***համայնքային սեփականության արոտավայր****: Տարածքի հարավային A հանգուցակետը գտնվում է Չիչխան գետի վրա՝ Չիչխան և Գետիկ գետերի հատման կետից 10մ հյուսիս-արևմուտք: A կետից սահմանագիծը (23.4մ) դեպի արևմուտք բլրի արևելյան լանջով միանում է B կետին: B կետից սահմանագիծը (36.7մ) դեպի հյուսիս-արևմուտք միանում է C կետին, այնուհետև դեպի արևմուտք՝ 57.5 մ եկարությամբ սահմանագիծը հասնում է D կետին: D կետից դեպի հյուսիս-արևմուտք սահմանագիծը (38.2մ) միանում է E կետին: B-C-D-E սահմանագիծը անցնում է ժայռերի վերին գագաթներով, իսկ սահմանագծից մինչև Չիչխան գետն ընկած տարածքները ամբողջությամբ զառիվեր լանջեր են: E կետից սահմանագիծը (78.7մ) դեպի հյուսիս հատում է Չիչխան գետը, անցնում գետի հանդիպակաց կողմը և միանում F կետին, այնուհետև դապի հյուսիս-արևելք (42.2մ), գրունտային ճանապարհի եզրով միանում G կետին: G կետից դեպի արևելք սահմանագիծը (37.6մ) բլրի լանջով միանում է H կետին, այնուհետև, թեքվելով դեպի հարավ-արևելք, Չիչխան գետին զուգահեռ (73.7մ) հասնում է մինչև I կետ: I կետից իջնելով դեպի հարավ՝սահմանագիծը (58.6մ) միանում է A հանգուցային կետին:*

Պահպանվող տարածքի սահմանի ընդհանուր երկարությունը՝416.6մ:

Սահմանային կետ	Կոորդինատներ*	
A	X	425675,98
	Y	4531603,83
B	X	425652,89

	Y	4531607,68
C	X	425625,18
	Y	4531632,05
D	X	425568,23
	Y	4531622,82
E	X	425536,92
	Y	4531644,11
F	X	425546,42
	Y	4531692,09
G	X	425581,57
	Y	4531715,95
H	X	425619,03
	Y	4531715,69
I	X	425670,34
	Y	4531662,33

*Կոորդինատային համակրգը՝ Pulkovo 1942, մետրական ցանցով

8. ***Պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները*** *– Բացի պահպանական գոտու տարածքից, գետի աղտոտումը և հյուծումը կանխելու, ինչպես նաև բարենպաստ ռեժիմ ապահովելու նպատակով,գետի երկայնքով, մինչև հարևան՝Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական սահմանը, մոտ 1,1 կմ, առանձնացված է ջրապահպան գոտի:*
9. ***Սպառնացող վտանգները*** *- Մարդու տնտեսական գործունեություն, չվերահսկվող տուրիզմ, չկարգավորված ջրօգտագործում:*
10. ***Նշանակությունը (կարգավիճակը)*** *– Տեղական նշանակության գիտաճանաչողական, գեղատեսիլ բնության հուշարձան:*
11. ***Տվյալներ պահպանություն իրականացնող սուբյեկտի մասին*** *– Մեծ Պառնի համայնք*
12. ***Առաջարկվող օգտագործման ձևերը*** *- Տուրիստական և ռեկրեացիոն նպատակներով:*
13. ***Լուսանկարը*** *– «Թռչկանի» ջրվեժ*



Համաձայնեցված է՝ Մեծ Պառնի համայնքի ղեկավար՝ Հ. Յաղուբյան



Համաձայնեցված է՝ Մեծ Պառնի համայնքի ղեկավար՝ Հ. Յաղուբյան